Արձանագրություն N 3

ԱՔ-ԳՀԾՁԲ-22/15 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արմավիր

07 հուլիսի 2022թ.
ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Աբգարյան |
| Հանձնաժողովի Գնահատող անդամներ՝ | Մ. Մանուկյան, Ա. Գրիգորյան |
| Բացող անդամներ՝ | Ս. Առաքելյան, Ս. Հարությունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Մ. Համբարյան |

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

**(Ա. Աբգարյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
3. Ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերի մասին,
4. Բանակցությունների կազմակերպման մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

## 2. Անհամապատասխանությունները շտկելու մասին

**(Ա. Աբգարյան)**

**Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել էին անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշել էր.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին, «Սուար» ՍՊԸ-ին և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին, որոնք պետք է ներկայացնեն շտկված փաստաթղթերը մինչև 07.07.2022թ. 16:30-ը ներառյալ:

Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 3. Ներկայացված հայտում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին

**(Ա. Աբգարյան)**

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գին |
| 1 | **ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ. Գորկի փողոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն** | | | | **4054584** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | «Սուար» ՍՊԸ | 1990000 | | 1990000 | |
| | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 2000000 | 400000 | 2400000 | |
| | «ԱՍՏԻԾԱՆ» ՍՊԸ | 2800000 | | 2800000 | |
| | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | 3490000 | | 3490000 | |

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

## 4. Բանակցությունների կազմակերպման մասին

(Ա. Աբգարյան)

**Քանի որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ. պարբերության համաձայն հաղթողին որոշելու նպատակով կասեցնել նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. հուլիսի 12-ին ժամը 15:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 30 րոպե:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Աբգարյան)

ԱՔ-ԳՀԾՁԲ-22/15 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հուլիսի 12-ին ժամը 15:30-ին Արմավիրի համայնքապետարան, ք. Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Աբգարյան

անդամներ՝ Մ. Մանուկյան

Ա. Գրիգորյան

Ս. Առաքելյան

Ս. Հարությունյան

Քարտուղար՝ Մ. Համբարյան